ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 986-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2003.09.03/45(280) Հոդ.809	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	23.07.2003
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	14.08.2003
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	21.08.2003
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13.09.2003	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
21 օգոստոսի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2003 թվականի N 986-Ն

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 95-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 46-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ստորերկրյա աղբյուրների պահուստավորման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2003 թ. օգոստոսի 14
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
հուլիսի 23-ի N 986-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ստորերկրյա աղբյուրների պահուստավորումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչությանը խմելու ջրով ապահովելու համար:

2. Ստորերկրյա պահուստային աղբյուրների ջրառը կառուցվում և շահագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ ջրօգտագործման թույլտվության ու հանքավայրերի շահագործման պայմանագրի առկայության դեպքում:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը համակարգում է շահագրգիռ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ստորերկրյա ջրաղբյուրների պահուստավորման ու պահպանման աշխատանքները:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն, ելնելով տարածքի նախագծից և համապատասխան ինժեներական հետազոտություններից, ընթացիկ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին պետք է կատարի ստորերկրյա պահուստային աղբյուրների ջրառի կառույցի տեսակի, տեղադրման սխեմայի ընտրությունը՝ այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության հետ:

(4-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

5. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը ջրերի որակը և քանակը հսկելու նպատակով դիտողական հորատանցքերով կահավորում է ստորերկրյա պահուստային աղբյուրները:

(5-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

6. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն իր իրավասության սահմաններում յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ պետք է իրականացնի ստորերկրյա պահուստային աղբյուրների ջրի մանրէաբանական, քիմիական և ֆիզիկական հատկությունների հետազոտություններ՝ արդյունքների մասին տեղյակ պահելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությանը, իսկ ջրամատակարարման համակարգերը շահագործող կազմակերպությունն արտակարգ իրավիճակներում պետք է իրականացնի արտադրական հսկողություն ջրի որակի նկատմամբ:

(6-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

7. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն ստորերկրյա պահուստային աղբյուրների ջրառի կետերում տարեկան առնվազն մեկ անգամ իրականացնում է ռեժիմային դիտարկումներ (ժամանակի ընթացքում ջրի քանակական և որակական ցուցանիշների օրինաչափությունների փոփոխության հանրագումարը) և արդյունքները ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն ու ջրօգտագործողներին:

(7-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

8. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն է ներկայացնում տեղեկատվություն ստորերկրյա պահուստային աղբյուրների մասին՝ արտակարգ իրավիճակների դեպքում բնակչությանը խմելու ջրով ապահովելու միջոցառումների ծրագրեր մշակելու համար:

(8-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

9. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն արտակարգ իրավիճակներում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ներկայացմամբ, ապահովում են ստորերկրյա պահուստային աղբյուրների պահպանությունը:

(9-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

(հավելվածը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**